

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏՇԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐՇՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՇԱԽՄԱՏԻ
ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԵՐՐՈՐԴ ԹԻՄԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹՈՂ Է ՃԱՆԱԶՎԵԼ
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԻՄԸ**

2015թ. նոյեմբերի 21-ին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի շախմատի դպրոցում կայացավ Հայաստանի պետհիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության կազմակերպած շախմատի հերթական՝ երրորդ թիմային առաջնությունը հանրապետական արհմիության Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների միջև:

Հանրապետական արհմիության գավաթին հավակնում էին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի, Մալաթիա - Սեբաստիա, Շենգավիթ, Արաբկիր վարչական շրջանների, «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կառավարության աշխատակազմի «Սպասարկում» ՊՈԱԿ-ի, Խարբերդի մասնագիտացված մանկատան աշխատողների արհեստակցական կազմակերպությունների թիմերը:

Մրցավարներն էին շախմատի դպրոցի տնօրեն, միջազգային կարգի գրոսմայստեր Լևոն Բաբուջյանը, և դպրոցի փոխտնօրեն Արթուր Անդրեասյանը:

Մրցույթում առաջին տեղը զբաղեցրեց և ճյուղային միության ոսկե գավաթին արժանացավ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության թիմը:

Երկրորդ տեղը զբաղեցրեց և արծաթե մեդալ ստացավ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիմը:

Բրոնզե մեդալ ստացավ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի թիմը:

Եզրափակելով խաղը՝ ճյուղային արհմիության նախագահ Անահիտ Ասատրյանը շնորհավորեց մասնակիցներին և նրանց հանձնեց Հայաստանի պետհիմնարկների արհմիության ձևավորման 85-ամյակին նվիրված 2016թ. սեղանի օրացույցեր, իսկ հաղթող թիմերը ստացան Ծաղկաձորում հանգստի ուղեգրեր:



Հայաստանի պետիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիության կազմակերպած շախմատի հերթական՝ երրորդ թիմային առաջնության մասնակիցները



ՀՀ ազգային վիճակագրական ծառայության թիմը



Առաջին տեղը զբաղեցրեց և ճյուղային միության ոսկե գավաթին արժանացավ
«Ազգային վիճակագրական ծառայության թիմը»



